

Արձանագրություն թիվ 4

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2020թ նոյեմբերի 23-ին

Օրակարգում`

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
4. Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:
5. Ընթացիկ հարցեր

Պրոֆեսոր Տ.Վ.Ղուչիկյան,- Գիտխորհրդի 15 անդամներից ներկա են 13-ը հետևաբար քվորումը ապահավոված է: Հիշեցնեմ օրակարգի հարցերը:

Ըստ օրակարգի 1-ին կետի պետք է հաստատենք մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները: Նախ տեսնենք ինչ վիճակում են գտնվում աշխատանքները:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ , պրոֆեսոր- Ն.Ա.Դուրգարյան: Մեր ամբիոնում արդեն սկսվել են ուսանողների հետ քննարկումները, սակայն ելնելով իրավիճակից որոշել ենք վերնագրերը քննարկել և ներկայացնել հաստատման հաջորդ գիտխորհրդի ժամանակ:

Կոլոիդ և ֆիզիկական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր – Շ.Ա.Մարգարյան: Մեր ամբիոնում այժմ ավարտական աշխատանք են սկսել կատարել 4 ուսանող քիմիա բաժնից, 2 ուսանող մագիստրատուրայի բաժնից, ֆարմացիա իստիտուտի հեռակա բաժնի 6 ուսանող: Ավարտական աշխատանքների և թեզերի վերնագրերը հաստատված են, ուսանողները սկսել են իրենց աշխատանքները` հիմնվելով ամբիոնում կիրառվող ֆիզ.մեթոդների վրա:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Ի.Մարտիրոսյան- ամբիոնում աշխատանքները ընթանում են նորմալ ընթացքով: ունենք մեկ մագիստրոս, նա փորձնական մասը արդենիսկ կատարել է և սկսել է աշխատանքի ձևակերպման գործընթացը:

Բակավլրիատի 4-րդ կուրսի ուսանողների հետ հանդիպել ենք, հստակեցվել է նրանց աշխատանքային գրաֆիկը: Աշխատանքները կընթանան նորմալ:

Տ.Վ.Ղոչիկյան – Հարգելի գործընկերներ նորից ուզում եմ հիշեցնել անվտանգության կանոնները: Եղեք մաքսիմալ ուշադիր, պահպանեք հակահամաճարաբային կանոնները և անհրաժեշտության դեպքում սահմանեք ուսանողների այցելության գրաֆիկ:

2. Տ.Վ.Ղոչիկյան – Լսենք ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Շ.Ա.Մարգարյան – Այս կուրսին մասնակցում են 5 ուսանող, նրանք բաժանված են 3 խմբի՝(1+2+2): Մեկ ուսանող հետազոտական աշխատանքները իրականացնում է Քիմ-ֆիզիկայի ինստիտուտում, իսկ մյուս ուսանողները աշխատանքները իրականացնում են Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնում: Աշխատանքները ընթանում են նորմալ և ժամանակին կավարտվեն:

Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ, պրոֆ. Ն.Ա.Դուրգարյան- հետազոտական աշխատանքների սկզմնական փուլն ավարտված է՝ իրականացվել է գրականության հավաքագրումը, փորձերի քննարկումը: Այժմ ուսանողները իրականացնում են հաշվարկման գործընթացը:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, Ա.Բ.Մարտիրյան: Մեր ամբիոնում հետազոտական բաղադրիչ ունի արտադրական տեխնոլոգիաներ առարկան: Ուսանողները ավարտել են գրականության հավաքագրման գործընթացը, այժմ անցել են փորձնական մասին:

Ամբիոնի վարիչները նշեցին, որ ամբողջական աշխատանքները կներկայացվեն դեկտեմբերի 22-ին:

4. Տ.Վ.Ղոչիկյան – Ընթացիկ հարցեր բաժնում մի քանի կետեր ունենք քննարկելու:

ա/ Ֆակուլտետի գիտական խորհուրդը պետք է ներկայացնի թեկնածու ԵՊՀ – ի գիտական խորհրդի կազմում ընդգրկվելու համար: Քվեարկությունը կարող ենք իրականացնել ինչպես փակ գաղտնի, այնպես էլ բաց տարբերակով: Գիտական խորհուրդը որոշեց ընտրությունը կատարել բաց քվեարկությամբ:

Ֆակուլտետի խորհրդի կողմից առաջադրվեցին երկու թեկնածու՝ պրոֆ. Կ.Ռ.Գրիգորյանը, պրոֆ. Ն.Ա.Դուրգարյանը: Բաց քվեարկության ընթացքում ԵՊՀ – ի գիտական խորհրդի կազմում ընդգրկվելու համար (11 կողմ, 0 դեմ, 2 ձեռնպահ)թեկնածու առաջադրվեց Ն.Ա.Դուրգարյանը:

բ/ Հայցորդների և ասպիրանտների ատեստավորման հարց:

Տ.Վ.Ղոչիկյան – պետք է նշեմ, որ այս տարի մեկ հայցորդի և մեկ ասպիրանտի համար պետք է ներկայացվի ամփոփիչ քաղվածք "Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բաժին": Գիտեք, որ այս տարի սեպտեմբերի 17-ին Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի հայցորդ Ջ. Գրիգորյանը "Նիտրիլ խումբ պարունակող որոշ միացությունների դիմեթիլ- և դիէթիլսուլֆօքսիդային լուծույթների ֆիզիկաքիմիական ուսումնասիրությունը" թեկնածուական ատենախոսական աշխատանքը ներկայացրել է հրապարակային պաշտպանության՝ քիմիական գիտությունների դոկտորի և թեկնածուի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՂ-ի ֆիզիկական քիմիայի 017 Մասնագիտական խորհրդում՝ Բ.00.04 ծածկագրով:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի ասպիրանտ Մարիետա Կարենի Ջաքարյանը "Մի շարք մետաղների թթվածնավոր միացությունների մագնեզիումա-կարբոթերմ վերականգնումն այրման ռեժիմում և W-Me(Cu,Ni,Ag)համաձուլվածքների սինթեզը" թեկնածուական ատենախոսական աշխատանքը պատրաստվում է դեկտեմբերի 24-ին ներկայացնել հրապարակային պաշտպանության՝ քիմիական գիտությունների դոկտորի և թեկնածուի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՎ-ի 017 Մասնագիտական խորհրդին՝ Բ.00.01 "Անօրգանական քիմիա" մասնագիտության գծով:

Նիստի նախագահ, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան- Ընթացիկ հարցերի բաժնում քննարկվելու է նաև Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ Ռ.Խ.Ադամյանի կողմից ներկայացված "Անօրգանական քիմիա" դասագրքի 2-րդ հատորի՝ «Անցումային տարրերի քիմիա» 2-րդ գրքի տպագրության հարցը: Ինչպես գիտեք վերոհիշյալ դասագիրքը՝ ըստ ընթացակարգի, ենթարկվել է արտաքին գրախոսման ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտում և ստացել է դրական բնութագիրը: Գրախոս՝ տ.գ.դ, պրոֆեսոր Ն.Բ.Կնյազյանը արժեքավորել է գիրքը և նշել է, որ այն հանրագիտարանային բնույթ է կրում, և կարող է դառնալ մասնագիտական ուղեցույց քիմիայով զբաղվողների համար:

Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդ քվերակության միաձայն արդյունքով

Որոշեց - Հաշվի առնելով Ռ. Խ. Ադամյանի "Անօրգանական քիմիա 2-հատորով" դասագրքի "Ոչանցումային տարրերի քիմիա" 2-րդ հատորի անհրաժեշտությունը ուսումնական գործընթացի համար՝ քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը (միաձայն քվերակության արդյունքում) որոշեց վերոհիշյալ դասագիրքը երաշխավորել տպագրության:

Տ.Վ.Ղոչիկյան – Ինչպես հիշում եք, Օրգանական քիմիայի ամբիոնից ներկայացվել էր դոցենտ Լ.Վ.Կարապետյանի և պրոֆեսոր Գ.Գ.Թոքմաջյանի – "Մանդի քիմիա Սննդամթերքի բաղադրության և որակի ուսումնասիրություն" լաբորատոր աշխատանքների ձեռնարկը: Այն ներկայացվել է արտաքին գրախոսման Հայաստանի ազգային ագրարայի համալսարան: Ձեռնարկի վերաբերյալ տրվել է դրական կարծիք:

Որոշեց - Հաշվի առնելով դոցենտ Լ.Վ.Կարապետյանի և պրոֆեսոր Գ.Գ.Թոքմաջյանի – "Մանդի քիմիա Սննդամթերքի բաղադրության և որակի ուսումնասիրություն" լաբորատոր

աշխատանքների ձեռնարկի անհրաժեշտությունը "Մենդի անվտագություն" բաժնի ուսանողների համար: Քիմիայի ֆակուլտետի գիտխորհուրդը (միաձայն քվեարկության արդյունքում) որոշեց վերոհիշյալ ձեռնարկը երաշխավորել տպագրության:

Քիմիայի ֆակուլտետի

Գիտխորհրդի նիստի նախագահ, պրոֆեսոր

Գիտխորհրդի նիստի քարտուղար, դոցենտ

Տ.Վ.Ղոչիկյան

Մ.Ա.Սամվելյան